

ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԾԻՔԸ (գրախոսը և գրախոսականը)

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում բարձր հեղինակություն վայելող իրավաբանը:

Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրի տվողը և/ կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով: